ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ԳԱԼՈՒՍՏ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սահակյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Էդմոն Մարուքյանի, Նաիրա Զոհրաբյանի, Վահե Էնֆիաջյանի, Վահան Բաբայանի և Թևան Պողոսյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-888-30.10.2015-ՊԱ-010/0) վերաբերյալ:

Օրենքի նախագծին կից ներկայացված հիմնավորման համաձայն՝ ներկայացված օրենքի նախագծով առաջարկվող փոփոխությունները հիմնականում կրկնակի չափով կրճատում են գործող Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում տեղ գտած՝ առավել հաճախ հանդիպող և նվազ հասարակական վտանգավորություն ունեցող ճանապարհատրանսպորտային իրավախախ-

տումների համար նախատեսված տուգանքները: Այդ կապակցությամբ անհրաժեշտ է նկատի ունենալ այն, որ Հայաստանի Հանրապետության վարչապետի 2014 թվականի մարտի 27-ի N 303-Ա որոշմամբ ճանապարհային երթևեկության կանոնների հաճախակի խախտումների համար նախատեսված տուգանքների չափերի վերանայման նպատակով ստեղծված աշխատանքային խմբի կողմից իրականացված աշխատանքների արդյունքում ներկայացված օրենքի նախագծով փոփոխվող հոդվածները 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ-78-Ն օրենքով ընդունվել են նոր խմբագրությամբ: Հարկ է նշել, որ աշխատանքային խմբի կողմից, նշված փոփոխությունները նախապատրաստելիս, ուսումնասիրվել է միջազգային փորձը, հաշվի են առնվել նաև վիճակագրական տվյալները, սահմանվել են հստակ չափանիշներ, որոնց առկայությունը հնարավորություն է տվել առավել մանրամասն կարգավորելու տվյալ բնագավառի իրավահարաբերությունները, մինչդեռ ներկայացված օրենքի նախագծի հիմնավորման մեջ բացակայում են վիճակագրական տվյալները, համապատասխան վերլուծությունները և այլն: Այդ առումով օրենքի նախագծում պատշաճ կերպով հիմնավորված չէ տուգանքների չափերի նվազեցման անհրաժեշտությունը:

Այդուհանդերձ, կիսելով օրենքի նախագծի հեղինակների մտահոգությունը, միաժամանակ անհրաժեշտ է նկատի ունենալ այն, որ, ի կատարումն Հայաստանի Հանրապետության Նախագահի 2012 թվականի հունիսի 30-ի «Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագիրը և ծրագրից բխող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՆԿ-96-Ա կարգադրության 2-րդ կետով հաստատված՝ Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագրից բխող միջոցառումների ցանկի 3.6.2.-րդ կետի պահանջի, ստեղծվել է աշխատանքային խումբ, որը ներկայումս մշակում է Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի նախագիծը, որում ամրագրվում են

նոր մոտեցումներ և սկզբունքներ: Այդ առումով օրենքի նախագծի հեղինակների բարձրացրած հարցերին համալիր լուծում տալու նպատակով անհրաժեշտ է դրանք քննարկել աշխատանքային խմբի կողմից մշակվող նախագծի հայեցակարգային մոտեցումների շրջանակներում:

Բացի դրանից, 2015 թվականի սեպտեմբերի 11-ին Հայաստանի Հանրապետության Նախագահի մոտ կայացած խորհրդակցության արդյունքում ստեղծված հանձնաժողովի աշխատանքների օրակարգում է ճանապարհային երթևեկության նվազ վտանգավոր, միտում չպարունակող խախտումների համար տուգանքները նախազգուշացմամբ փոխարինելու, ինչպես նաև տուգանքների կրկնակի վճարման (գանձման) դեպքերը բացառելու համակարգի ներդնումը:

Ելնելով շարադրվածից, Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեմ է ներկայացված օրենքի նախագծի ընդունմանը և օրենսդրական նախաձեռնության հեղինակներին առաջարկում է ներկա փուլում ձեռնպահ մնալ օրենսդրական նախաձեռնության քննարկումից:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Արփինե Հովհաննիսյանը:

Օրենքի նախագծի ընդունման դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման կամ այլ իրավական ակտի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Կից ներկայացվում են օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունները:

Հարգանքով՝

ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման դեպքում

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումն առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

Եզրակացություն

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ Կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 18-Ն որոշման համաձայն:

Նախագծի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաոլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագիծը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն.**

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **դրական ազդեցություն:**

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված Կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի բնապահպանության բնագավառում կարգավորման

1. <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Օրենք) ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:
2. Օրենքի նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:
3. Օրենքի նախագիծը բնապահպանության ոլորտին չի առնչվում, ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չի հակասում:

Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ)՝ գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա նախատեսվում է ***ոչ էական դրական ազդեցություն՝*** *հաշվի առնելով այն հանգամանքը, որ Նախագծով առաջարկվում է կրճատել ճանապարհատրանսպորտային բնագավառի վարչական իրավախախտումների համար նախատեսված տուգանքների չափերը:*

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) նախատեսվում է կրճատել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում առկա՝ ճանապարհատրանսպորտային ոլորտին առնչվող մի շարք տուգանքներ:

Նախագծով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ առանձին ապրանքային շուկայի հետ, ուստի և Նախագծի ընդունմամբ որևէ առանձին ապրանքային շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի՝ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

Նախագծով, մասնավորապես, առաջարկվում է կրկնակի չափով նվազեցնել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով սահմանված՝ առավել հաճախ հանդիպող և նվազ հասարարական վտանգավորություն ունեցող ճանապարհատրանսպորտային բնագավառի վարչական իրավախախտումների համար նախատեսված վարչական տուգանքների չափերը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ նախագծի ընդունման ազդեցությունը պետական բյուջեի ծախսերի վրա կլինի չեզոք, իսկ եկամուտների վրա՝ բացասական, սակայն ազդեցության կոնկրետ չափը հնարավոր չէ գնահատել՝ ելնելով եկամտատեսակի բնույթից:

Միաժամանակ հայտնում ենք, որ Նախագծի թե ընդունումը, և թե չընդունումը ՀՀ համայնքների բյուջեների եկամուտների վրա ազդեցություն չի թողնի:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-888-30.10.2015-ՊԱ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 06-ի օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 123-րդ հոդվածում՝

2-րդ մասի «քսանապատիկի» բառը փոխարինել «տասնապատիկի» բառով,

4-րդ մասի «հիսնապատիկի» բառը փոխարինել «քսանհինգապատիկի» բառով:

Հոդված 2. Օրենսգրքի 1234-րդ հոդվածում՝

1-ին մասի «քսանապատիկի» բառը փոխարինել «տասնապատիկի» բառով,

2-րդ մասի «քսանապատիկի» բառը փոխարինել «տասնապատիկի» բառով:

Հոդված 3. Օրենսգրքի 1235-րդ հոդվածում՝

3-րդ մասի «քսանապատիկի» բառը փոխարինել «տասնապատիկի» բառով,

7-րդ մասի «հարյուրապատիկի» բառը փոխարինել «հիսնապատիկի» բառով,

8-րդ մասի «հիսնապատիկի» բառը փոխարինել «քսանհինգապատիկի» բառով:

Հոդված 4. Օրենսգրքի 123.7-րդ հոդվածի «քսանապատիկի» բառը փոխարինել «տասնապատիկի» բառով:

Հոդված 5. Օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերն ուժը կորցրած ճանաչել,

3-րդ մասի «հնգապատիկի» բառը փոխարինել «եռապատիկի» բառով,

4-րդ մասի «քսանապատիկի» բառը փոխարինել «տասնապատիկի» բառով,

5-րդ, 6-րդ, 8-րդ եւ 9-րդ մասերի «հնգապատիկի» բառը փոխարինել «եռապատիկի» բառով,

13-րդ մասի «տասնապատիկի» բառը փոխարինել «հնգապատիկի» բառով,

17-րդ մասի «քսանապատիկի» բառը փոխարինել «տասնապատիկի» բառով,

18-րդ մասի «երեսնապատիկի» բառը փոխարինել «տասնհինգապատիկի» բառով,

21-րդ մասի «հնգապատիկի» բառը փոխարինել «եռապատիկի» բառով,

22-րդ մասի «տասնապատիկի» բառը փոխարինել «հնգապատիկի» բառով,

23-րդ մասի «քսանապատիկի» բառը փոխարինել «տասնապատիկի» բառով,

26-րդ մասի «տասնհինգապատիկի» բառը փոխարինել «ութապատիկի» բառով,

27-րդ մասի «քսանապատիկի» բառը փոխարինել «տասնապատիկի» բառով,

31-րդ մասի «երկուհարյուրապատիկի» բառը փոխարինել «հարյուրապատիկի» բառով,

32-րդ հոդվածի «երեքհարյուրապատիկի» բառը փոխարինել «հարյուրհիսնապատիկի» բառով:

Հոդված 6. Օրենսգրքի 124.3-րդ հոդվածում՝

1-ին մասի «քսանապատիկի» բառը փոխարինել «տասնապատիկի» բառով,

2-րդ մասի «հիսնապատիկի» բառը փոխարինել «քսանհինգապատիկի» բառով:

Հոդված 7. Օրենսգրքի 124.4-րդ մասում՝

1-ին մասի «նվազագույն աշխատավարձի չափով:» բառերը փոխարինել «նվազագույն աշխատավարձի 50 տոկոսի չափով:» բառերով,

2-րդ մասի «նվազագույն աշխատավարձի 150 տոկոսի չափով:» բառերը փոխարինել «նվազագույն աշխատավարձի 75 տոկոսի չափով:» բառերով:

Հոդված 8. Օրենսգրքի 1247-րդ հոդվածի «հնգապատիկի» բառը փոխարինել «եռապատիկի» բառով:

Հոդված 9. Օրենսգրքի 1292-րդ հոդվածում՝

1-ին մասի «հնգապատիկի» բառը փոխարինել «եռապատիկի» բառով, «հարյուրապատիկի» բառը փոխարինել «հիսնապատիկի» բառով,

2-րդ մասի «հարյուրապատիկի» բառը փոխարինել «հիսնապատիկի» բառով:

Հոդված 10. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հ ի մ ն ա վ ո ր ու մ

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման

Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի նախագծով 4% 12-ամսյա գնաճ է կանխատեսվել: Նվազագույն աշխատավարձի եւ պետական կենսաթոշակների բարձրացում չի նախատեսվում: Միայն ընթացիկ տարվա առաջին կիսամյակում դրամն արժեզրկվել է 13,8%-ով: Ընդ որում, սրանք միայն պաշտոնական թվերն են: Շեշտակի կրճատվել է արտաքին առեւտուրը, եւ դրա մակարդակի զգալի բարձրացում տեսանելի ապագայում չի նախատեսվում:

Մինչդեռ, վարչական իրավախախտումների համար նախատեսված սանկցիաների ընդհանրապես եւ դրանցից ամենահաճախակին կիրառվող՝ ճանապարհատրանսպորտային բնագավառի վարչական իրավախախտումների համար նախատեսված տուգանքների կրճատում մասնավորապես չի նախատեսվել:

Այսպես, օրինակ՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով՝

Ապակիների լուսաթափանցելիության չափի խախտմամբ կամ կարգի խախտմամբ վարագուրապատված տրանսպորտային միջոցները վարելն առաջացնում է տուգանքի նշանակում նվազագույն աշխատավարձի 50-ապատիկի չափով:

Ուժի մեջ գտնվող տեխնիկական զննության կտրոնը տրանսպորտային միջոցի՝ օրենսդրությամբ սահմանված տեղում չփակցված վիճակով տրանսպորտային միջոց վարելն առաջացնում է տուգանքի նշանակում նվազագույն աշխատավարձի 20-ապատիկի չափով:

Ժամանակավոր համարանիշի օգտագործման ժամկետը լրանալուց հետո տրանսպորտային միջոցն այդ համարանիշերով վարելն առաջացնում է տուգանքի նշանակում նվազագույն աշխատավարձի 20-ապատիկի չափով:

Երթեւեկության սահմանված արագությունը 11-30կմ/ժ-ով գերազանցելն առաջացնում է տուգանքի նշանակում յուրաքանչյուր գերազանցված կմ/ժ արագության համար նվազագույն աշխատավարձի 150%-ի չափով: Ընդ որում, Վրաստանում արագության գերազանցման թույլատրելի չափը 20կմ/ժ է, մեզ մոտ՝ 10կմ/ժ:

Միայն 2014 թվականին 3,1 մլրդ դրամ տուգանք է վճարվել ճանապարհային երթեւեկության կանոնների խախտման համար: Գոյություն ունեցող պայմաններում քաղաքացիների՝ հաճախ անգամ առաջնային կարիքները բավարարելու համար չբավականացնող միջոցները նրանցից գանձելը որեւէ կերպ չի կարող արդարացվել:

Այստեղ անհրաժեշտ է նաեւ հաշվի առնել, որ թե՛ հանցագործությունների, թե՛ վարչական իրավախախտումների համար նախատեսված սանկցիայի առաջնային նշանակությունը ոչ թե պատժելն է, այլ նախականխումը (պրեվենցիան): Ավելին, հայտնի փաստ է, որ կանխարգելման համար առաջնային նշանակություն ունի ոչ թե պատժի խստությունը, այլ դրա անխուսափելիության գիտակցումը: Այսպիսով ակնհայտ է, որ կանխարգելման համար ավելի նվազ չափի տուգանքն էլ բավարար է:

Խնդրի վերաբերյալ Հանրապետության Նախագահը սեպտեմբերի 11-ին խորհրդակցություն է անցկացրել, որի ընթացքում, ի թիվս այլ հանգամանքների, հայտարարել է. «(...) մենք պետք է կարողանանք տարբերակել կոպիտ խախտումներն այն խախտումներից, որոնք մարդիկ համարում են չնչին խախտումներ, եւ նրանք դա դիտարկում են որպես իրենցից փող գանձելու միջոց: Մեկ անգամ եւս կրկնում եմ՝ տուգանքներն ընդամենը միջոց են մեր նպատակին հասնելու համար: Տուգանելը նպատակ չէ: Չնչին խախտումներ ասելով՝ ես նկատի ունեմ առաջին հերթին, օրինակ, այսպես ասած, այդ հոծ գծերի տրորումը: (...) արդյո՞ք մեր ճանապարհներին, մեր մայրուղիներին մենք մոտեցել ենք ուշադիր եւ այդ բոլոր գծանշաններն արել ենք կարգուկանոնով եւ հարմարավետություն ապահովելու համար, թե՞ ուղղակի արել ենք, որպեսզի ավելի շատ խախտումներ լինեն»: Խորհրդակցության ընթացքում Նախագահը տվել է օրենսդրության բարեփոխման եւ հատկապես սանկցիաների նվազեցման վերաբերյալ բազմաթիվ հանձնարարականներ, որոնք, սակայն, մինչ օրս չեն իրականացվել:

Ներկայացված նախագծով առաջարկվող փոփոխությունները հիմնականում կրկնակի չափով կրճատում են գործող Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում տեղ գտած՝ առավել հաճախ հանդիպող եւ նվազ հասարակական վտանգավորություն ունեցող ճանապարհատրանսպորտային բնագավառի վարչական իրավախախտումների համար նախատեսված տուգանքները: